

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐԸ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-18/02**

ք. Երևան

« 12 » « փետրվարի » 2018թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Հ.Հովհաննիսյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն **Ս.Պապյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվություն» ծրագրի՝ բաժին 05, խումբ 06, դաս 01, ծրագիր 06 (շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության ծառայությունների իրականացման միջոցառումներ, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **226 949 800 (երկու հարյուր քսանվեց միլիոն ինը հարյուր քառասունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ** գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N¹-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**
 - 2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
 - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
 - 2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**
 - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
 - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**
 - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.
 - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
 - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:
- 2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**
 - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.
 - 2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.



- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.
- 2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.
- 2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
- 2.4.8. սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

3. Մոնիթորինգը

- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները


- 4.1. Սույն պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
 - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է սույն պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը, եթե կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2018 թվականի հունվարի 8-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:



7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված N°2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողությունները Կազմակերպությունը ուղղում է իր կանոնադրական գործառույթների իրականացմանը:
- 8.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Սույն պայմանագրի Հավելվածներ N°N°1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«ՀՀ բնապահպանության նախարարություն»

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011007706

ՀՎՀՀ 02507198

«ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար

Հ.Հովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և
տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ

ք.Երևան, Չարենցի 46

«ՎՏԲ Հայաստան բան» ՓԲԸ

ՀՀ 16048321347800


ՀՎՀՀ 02659596

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և
տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ս.Պապյան

(ստորագրություն)

Կ.Տ.



ՊԵՏԱԿԱՆ ՍԱՐՄՈՒՆ

ՀՀ բնակավայրային տնտեսության նախարարության
մեջնախտակագրի ղեկավար
Է. Տովհաննիսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և
տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Կ. Պապյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա- ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգի իրականացում	ՀՀ մակերևութային ջրերի 6 ջրավազանային կառավարման տարածքի, 14 գետավազանի 55 ջրային օբյեկտի 131 դիտակետից ջրի նմուշառման, դաշտային չափումների, ֆիզիկաքիմիական անալիզների և որակի գնահատման իրականացում	ՀՀ մակերևութային ջրերի որակի մասին տեղեկագիր. ամսական՝ 12 հատ, եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր, ջրի որակի քիմիական կարգավիճակի 2018 թվականի ընթացք, ՀՀ մակերևութային ջրերի 6 ջրավազանային կառավարման տարածքի, 14 գետավազանի 55 ջրային օբյեկտի 131 դիտակետում որակի 2018 թվականի տվյալների բազա՝ 40280 ցուցանիշ:	1. ՀՀ մակերևութային ջրերի որակի մասին ջրաքիմիական տվյալների առկայություն: 2. ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի գնահատականների առկայություն: 3. Օպերատիվ հաղորդագրություններ ջրի «բարձր» և «արտակարգ բարձր» (V դաս) աղտոտվածության վերաբերյալ: 4. Մակերևութային ջրերի որակը բնութագրող ցուցանիշների առավելագույն ցանկ՝ 1. Գույն 2. Ջերմաստիճան 3. Հոտ 4. Թափանցիկություն 5. Լուծված թթվածին 6. Թթվածնի հագեցվածության տոկոս 7. Թթվածնի քիմիական պահանջարկ 8. Թթվածնի 5-օրյա կենսաքիմիական պահանջարկ 9. Էլեկտրահաղորդականություն 10. Ջրածնային ցուցիչ 11. Հանքայնացում 12. Կախված մասնիկներ 13. Կոշտություն 14. Հիդրոկարբոնատներ 15. Կարբոնատներ 16. Նատրիում 17. Սազնեցիում	30.12.2018թ.	81 468 110

				18. Կալցիում 19. Կալիում 20. Ամոնիում իոն 21. Սիլիկատ իոն 22. Նիտրիտներ 23. Նիտրատներ 24. Սուլֆատներ 25. Քլորիդներ 26. Ֆոսֆատներ 27. Ֆոսֆոր ընդհանուր 28. Ֆտորիդներ 29. Պղինձ 30. Երկաթ 31. Արսեն 32. Կապար 33. Քրոմ 34. Կադմիում 35. Ցինկ 36. Մանգան 37. Մոլիբդեն 38. Այոդին 39. Նիկել 40. Բոր 41. Բերիլիում 42. Սելեն 43. Նիկել 44. Անագ 45. Անտիմոն 46. Օրգանական ածխածին 47. Ընդհանուր կապված ազոտ 48. ՋՇԴ- առաջնային աղտոտիչներ (33) 49. ՋՇԴ- երկրորդային աղտոտիչներ (8) 50. Նավթամթերքներ (բենզոլ, տոլուոլ, քսիլոլ) 51. Այլ		
2.	ՀՀ բնակավայրերի օդային մոնիթորինգի իրականացում	ՀՀ բնակավայրերի գետնամերձ շերտի մթնոլորտային օդի որակի մոնիտորինգի իրականացում և գնահատում	1. ՀՀ մինչև 10 բնակավայրի և կարևոր տարածքների օդային ավազանների աղտոտվածության վիճակի վերաբերյալ տեղեկագրեր. ամսական՝ 12 հատ, եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ տարեկան ամփոփագիր: 2. ՀՀ մինչև 10 բնակավայրի և կարևոր տարածքների մթնոլորտային օդի գետնամերձ շերտի աղտոտվածության բաշխման (շաբաթական, ամսական, եռամսյակային, տարեկան) ընթացք՝ շաբաթական՝ 450 հատ, ամսական՝ 120 հատ, տարեկան՝ 18 հատ:	1. ՀՀ մինչև 10 բնակավայրի և կարևոր տարածքների մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի գնահատականների և աղտոտիչների կոնցենտրացիոն բաշխման քարտեզների առկայություն: 2. Օպերատիվ հաղորդագրություններ բնակավայրերի օդային ավազանների «բարձր» և «արտակարգ բարձր» աղտոտվածության վերաբերյալ (յուրաքանչյուր դեպքի համար): Օդի գետնամերձ շերտում որոշվող ցուցանիշների առավելագույն ցանկ՝ 1. Ծծմբի երկօքսիդ 2. Ազոտի երկօքսիդ 3. Ազոտի օքսիդ 4. Ածխածնի մոնօքսիդ 5. Գետնամերձ օզոն	30.12.2018թ.	49 932 150

			<p>3. ՀՀ մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի 2018 թվականի տվյալների բազա՝ 490652 ցուցանիշ</p>	<p>6. Ընդհանուր փոշի 7. Փոշու մեջ գտնվող մետաղներ, տարրեր, 8. Այլ</p>		
3.	<p>Ծաղկածորմ շրջակա միջավայրի որակի մոնիթորինգի իրականացում</p>	<p>Ծաղկածորմի և շրջակա տարածքի մթնոլորտային օդի գետնամերձ շերտի, տեղումների, հողային ծածկույթի՝ նմուշառում, ֆիզիկաքիմիական անալիզներ: Օդի որակի գնահատում և արտոտիչների կոնցենտրացիոն բաշխման ջարտեղների կազմում, հողային ծածկույթի արտոտվածության գնահատում: Աջակցություն Ծաղկածորմի՝ որպես միջազգային գրաստանության կենտրոնի վարկանիշի պահպանմանը և բարձրացմանը՝ շրջակա միջավայրի որակի մասին բնապահպանական, մոնիթորինգային որակյալ և օպերատիվ տեղեկատվության ստացման, տրամադրման և տարածման միջոցով:</p>	<p>1. Ծաղկածորմի մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի տեղեկագիր. ամսական՝ 12 հատ, եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 2. Ծաղկածորմի մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի գնահատական և արտոտիչների կոնցենտրացիոն բաշխման ջարտեղ. Շաբաթական՝ 104 հատ, ամսական՝ 24 հատ, տարեկան՝ 2 հատ: 3. Ծաղկածորմի և շրջակա տարածքի հողային ծածկույթի որակի տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 4. Տեղումների քիմիական կազմի վերաբերյալ տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 5. ՀՀ մթնոլորտային օդի գետնամերձ շերտի, տեղումների, հողային ծածկույթի որակի 2018 թվականի տվյալների բազա՝ 4868 ցուցանիշ, այդ թվում՝ Ծաղկածորմ շրջակա մթնոլորտային օդի և տեղումների որակի մոնիթորինգ-3168 Ծաղկածորմ շրջակա մթնոլորտային օդի գետնամերձ շերտի, տեղումների, հողային ծածկույթի արտոտվածության մոնիթորինգ-740 Տանձադրույթի գետի ջրի որակի մոնիթորինգ-960</p>	<p>1. Ծաղկածորմի և շրջակա տարածքի մթնոլորտային օդի, տեղումների, փոշու, հողային ծածկույթի որակի տվյալների, մթնոլորտային օդի գետնամերձ շերտի որակի գնահատականի և արտոտիչների կոնցենտրացիոն բաշխման ջարտեղների, հողային ծածկույթի որակի գնահատականների անկախություն: 2. Օպերատիվ հարրոգագրությունների անկախություն՝ • ջրի «բարձր» և «արտակարգ բարձր» (V դաս) արտոտվածության վերաբերյալ: • մթնոլորտային օդի «բարձր» և «արտակարգ բարձր» արտոտվածության վերաբերյալ (յուրաքանչյուր դեպքի համար): 3. Ծաղկածորմի որպես միջազգային գրաստանության կենտրոնի վարկանիշի պահպանման և բարձրացման աջակցության ապահովում՝ շրջակա միջավայրի որակի մասին բնապահպանական, մոնիթորինգային որակյալ և օպերատիվ տեղեկատվության ստացման, տրամադրման և տարածման միջոցով:</p>	30.12.2018թ.	5 641 300
4.	<p>Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրաօդային տարածման մոնիթորինգ: Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի (EMEP) իրականացում</p>	<p>Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրաօդային տարածման մոնիթորինգի իրականացում, առաջնային տվյալների ստացում, մշակում, գնահատում, պահպանում, տրամադրում: Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրաօդային տարածման մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարում: Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի</p>	<p>1. Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրաօդային տարածման մոնիթորինգի տեղեկագիր. ամսական՝ 12 հատ, եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 2. Տվյալների տրամադրում Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի Քիմիական կորդինացիոն կենտրոնի (Նորվեգիայի օդի հետազոտությունների ինստիտուտ)՝ պահանջվող ձևաչափով: 3. «Եվրոպայում մեծ</p>	<p>1. Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրաօդային տարածման մոնիթորինգային առաջնային տվյալների և գնահատականների անկախություն: 2. Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների անդրաօդային տարածման մասին» կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարում: 3. Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի արվարձանություն:</p>	30.12.2018թ.	8 294 700

		<p>արտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի իրականացում</p>	<p>հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի՝ շրջանակում Նորվեգիայի օդի հետազոտությունների ինստիտուտի կողմից կազմակերպվող ամենամյա միջազգային ստուգանքային իրականացում: 4. Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի Քիմիական կորդինացիոն կենտրոնի և ՀՀ մթնոլորտային օդի որակի 2018 թվականի տվյալների բազա՝ 17220 ցուցանիշ:</p>			
5.	<p>Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացում</p>	<p>Արաքս գետի ջրի և հատակային նստվածքի հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացման միջոցառումներ՝ նմուշառում և նմուշների ֆիզիկաքիմիական անալիզներ, առաջնային տվյալների ստացում, տվյալների վերլուծություն: Արաքս գետի հայ-իրանական սահմանի հատվածում ջրի աղտոտման հնարավոր աղբյուրների և պատճառների բացահայտում, գնահատում:</p>	<p>1. Արաքս գետի հայ-իրանական սահմանի հատվածի ջրի որակի վերաբերյալ տեղեկագիր. եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: 2. Տարեկան ամփոփ վերլուծության փոխանակում իրանական կողմի հետ: 3. Տվյալների փոխանակման վերաբերյալ համատեղ արձանագրություն՝ 1 հատ: 4. Տվյալների համալիր վերլուծության պատրաստում և ներկայացում հայ-իրանական համատեղ ամենամյա նիստի ընթացքում: Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացում՝ 2376 ցուցանիշ՝ այդ թվում Արաքս գետի հատակային նստվածքների մոնիթորինգի իրականացում՝ 360 ցուցանիշ, Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգ 2016 ցուցանիշ:</p>	<p>1. Արաքս գետի հայ-իրանական սահմանի հատվածի ջրի և հատակային նստվածքի որակի մասին ֆիզիկաքիմիական տվյալների անկախություն: 2. Արաքս գետի ջրի որակի վրա աղտոտման կետային ու դիֆուզիայի աղբյուրների և ճեշման գերծնների ներգործության գնահատականների անկախություն: 3. ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարում: 4. Արաքս գետի և վտակների ջրի որակը քննադատող ցուցանիշների առավելագույն ցանկը՝ 1. Գույն 2. Ջերմաստիճան 3. Հոտ 4. Թափանցիկություն 5. Ջրածնային ցուցիչ 6. Լուծված թթվածին 7. Թթվածնի քիմիական պահանջարկ 8. Թթվածնի հեզոթյա կենսաքիմիական պահանջարկ 9. Էկոտոքսիկոլոգիականություն 10. Հանքայնացում 11. Կախված մասնիկներ 12. Կոշտություն 13. Սուլֆատներ 14. Հիդրոկարբոնատներ 15. Մագնեզիում 16. Կալցիում 17. Կալիում 18. Նատրիում 19. Ամոնիում իոն 20. Քլորիդներ 21. Լիտիումներ</p>	30.12.2018թ.	4 395 700



				22. Նիտրատներ 23. Ֆոսֆատներ 24. Ֆոսֆոր ընդհանուր 25. Ցինկ 26. Մոլիբդեն 27. Մանգան 28. Պղինձ 29. Երկաթ 30. Արսեն 31. Կապար 32. Քրոմ 33. Կադմիում 5. Արաքս գետի հատակային նստվածքները քննությամբ ցուցանիշների առավելագույն ցանկը՝ մինչև 35 մետաղ:		
6.	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմում և նրա առանձնացված ստորաբաժանումներում տեղային համակարգային ցանցերի և առկա համակարգային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում և վերանորոգում, էլեկտրոնային փոստի, ինտերնետ կապի տեխնիկական սպասարկում	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմում և նրա առանձնացված ստորաբաժանումներում առկա համակարգային, տպագրական տեխնիկայի և պատճենահանման սարքերի, տեղային ցանցերի սպասարկում	Համակարգային և տպագրական տեխնիկայի պարբերական միջոցառումների իրականացում, անսարքությունների վերացում, web, E-mail և File սերվերների աշխատանքի կազմակերպում, տեղային ցանցերի սպասարկում:	Համակարգային տեխնիկայի և տեղային ցանցերի անխափան աշխատանք	30.12.2018թ.	9 462 000
7.	Նախարարության պաշտոնական կայքի, սպասարկում, այդ թվում՝ նյութերի հավաքագրում, ամփոփում, մշակում, տեղադրում: Կայքի պարբերաբար թարմացում: Շնորհիվ կարգով եռալեզու ներկայացում: Բնապահպանական ոլորտի տեղեկատվության հավաքագրում, մշակում, ամփոփում և արխիվացում: ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի, սպասարկում, այդ թվում՝ նյութերի հավաքագրում, ամփոփում, մշակում, տեղադրում: Կայքի պարբերաբար թարմացում:	Համաձայն ընդունված կարգի նախարարության ստորաբաժանումներից ստացված տեղեկատվության մշակում, ամփոփում և տեղադրում կայքում: «Հիդրոմետ» և մոնիտորինգի տվյալների արխիվացում և տեղադրում տեղային ցանցում:	Կայքում նյութերի տեղադրում՝ ըստ սահմանված կարգի: Եռալեզու ամենօրյա թարմացում:	Գործող 1 կայք՝ www.mnp.am	30.12.2018թ.	6 261 900
		Համաձայն ընդունված կարգի ՊՈԱԿ-ի տեղեկատվության մշակում, ամփոփում և տեղադրում կայքում:	Կայքում նյութերի տեղադրում՝ ըստ սահմանված կարգի:	Գործող 1 կայք՝ www.armmonitoring.am		

8

8.	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի, և նրա առանձնացված ստորաբաժանումների կողմից օգտագործվող տվյալների շտեմարանների շահագործման ընթացքում առաջացած խնդիրների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում: Նոր բազաների ստեղծման նպատակով ուսումնասիրությունների անցկացում և առաջարկությունների ներկայացում: ՕՊՕ համակարգի սպասարկում:	Գործող բազաների վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրում և նոր բազաների նախագծում: ՕՊՕ (օդի պահանջվող օգտագործում) համակարգի սպասարկում:	Առկա շտեմարանների անխափան աշխատանքի ապահովում: ՕՊՕ-ի շտեմարանի նորացում:	Շտեմարանների առկայություն ՕՊՕ -ի շտեմարան:	30.12.2018թ.	1 841 100
9.	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու հասարակությանը բնապահպանական ոլորտի տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի» (Օրիոս կենտրոնի) սպասարկում	Բնապահպանական ոլորտի տեղեկատվության տրամադրում և Օրիոս կենտրոնի միջոցառումների կազմակերպում	1. Սեմինարների, բաց դասերի, հասարակական լուսամտերի կազմակերպում: 2. Հասարակությանը տեղեկատվության տրամադրում: 3. Գրադարանի և ֆիլմադրանի այցելուների սպասարկում:	Երևանյան Օրիոս կենտրոնի սպասարկում	1 591 540	
10.	ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիտորինգի իրականացում	Ստորերկրյա ջրերի ուժեղ և ձևավորման օրինաչափությունների գնահատում:	Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոնրկաբանական մշտադիտարկումների իրականացում 128 դիտակետերում (քաղցրայինների թիվ՝ 65, շատրվանող հորատանցքերի թիվ՝ 24, բացասական մակարդակով հորատանցքերի թիվ՝ 39) 1. Յուրաքանչյուր դիտակետի շուրջ հյուսիս-հարավ-արևելք-արևմուտք ուղղություններով տեխնիկական երթուղու երկարությունը՝ 3 կմ 2. Տեխնիկական երթուղիների երկարությունը՝ 384 կմ 3. Ջրի մակարդակի (ճշման) չափման	Ստացված արդյունքները հնարավորություն կտան գնահատելու ստորերկրյա քաղցրահամ ջրերում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները ջրերը սպառումից զերծ պահելու նպատակով	30.12.2018թ.	42 533 000


9

			<p>շատրվանող և բացասական մակարդակով հորատանցքերի թիվը՝ 52 հատ</p> <p>4.Ջրի մակարդակի (ճնշման) չափումների թիվը՝ 3744 հատ</p> <p>5. Ջրի ծախսի չափման դիտակետերի (շատրվանող հորեր և քնադրյուղներ) թիվը՝ 88 հատ</p> <p>6.Ջրի ծախսի չափումների թիվը՝ 6336 հատ</p> <p>7. Ջրի ցերմաստիճանի չափումների թիվը՝ 9216 հատ</p> <p>8. Ջրակետերի շուրջ ոտքով անցման երթուղու երկարությունը՝ 9936 կմ</p> <p>9. Ջրի նմուշների քանակը՝ 100 հատ</p> <p>10. Ջրի լրիվ քիմիական անալիզի լաբորատոր դիտարկումների թիվը՝ 100 հատ</p> <p><< ստորերկրյա ջրերի քանակի և որակի վերաբերյալ տեղեկագիր. եռամսյակային՝ 4 հատ, տարեկան՝ 1 հատ, տարեկան ամփոփագիր՝ 1 հատ: Միջոցառումները կկատարվեն << օրենսդրությանը սահմանված ստանդարտներին, նորմերին և կանոններին համապատասխան: Աշխատանքային միջոցառումների հիման վրա ներկայացվում է հաշվետվություն ստորերկրյա ջրերի քանակական և որակական փոփոխությունների բնութագրերի վերաբերյալ՝ այսմանավորված բնական և տեխնածին գործոնների ազդեցության /թղթային և էլեկտրոնային կրիչներով/:</p>			
11.	Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին աջակցություն	<< տարածքում 2017թ. առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում, վերլուծություն: Հաշվետվությունների թիվը 1050 (հազար հիսուն):	Կազմակերպություններում առաջացած թափոնների հաշվառում, դասակարգում՝ ըստ վտանգավորության աստիճանի և տնտեսության ճյուղերի ու սպասարկման ոլորտի	Հաշվետվություններ	30.12.2018	2 646 000
12.	Ռեեստրների ստեղծման աջակցություն	Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծմանն աջակցություն	1. Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման 20 օբյեկտների ուսումնասիրում, 2. թափոնների հեռացման 11 վայրերի ուսումնասիրում,	1. Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների վերաբերյալ հաշվետվություններ 2. թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ հաշվետվություններ,	30.12.2018	2 880 000

10

			3. Թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացման, օգտահանման, և վնասագերծման, ինչպես նաև սակավաթափոն և անթափոն տեխնոլոգիաների վերաբերյալ միջազգային լավագույն փորձի և սեփական վերլուծությունների արդյունքում ուսումնասիրված տեխնոլոգիաների թիվը- 42	3. տեխնոլոգիաներ		
13.	Երկրորդային հումքի ստացման նպատակով թափոնների վերամշակման, այդ թվում օրգանական թափոնների կրկնակի օգտագործման միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում	Երկրորդային հումքի և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման եղանակների և մեթոդների ուսումնասիրում	Երկրորդային հումքի (թուղթ, պոլիէթիլեն և այլն) վերամշակման և օրգանական թափոնների կրկնակի օգտագործման միջազգային փորձի ուսումնասիրում՝ <<- ում ներդրելու նպատակով	Մեթոդներ	30.12.2018	840 000
14.	Անալիտիկ լաբորատորիայում հետազոտությունների իրականացում	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով << ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով, լաբորատոր հետազոտությունների իրականացում	Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների մնացորդային քանակների որոշում-390 նմուշ	Անալիտիկ հետազոտություններ	30.12.2018	7 200 000
15.	Վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրում	Պոլիբրոմինացված դիֆենիլ էթերներ (PBDEs) պարունակող թափոնների վերամշակման և ոչնչացման համար առկա լավագույն տեխնոլոգիաների և քնապահպանական իմաստով լավագույն փորձի մեթոդական ցուցումների մշակում	Պոլիբրոմինացված դիֆենիլ էթերներ (PBDEs) պարունակող թափոնների վերամշակման և ոչնչացման համար առկա լավագույն տեխնոլոգիաների և քնապահպանական իմաստով լավագույն փորձի մեթոդների ուսումնասիրում	Մեթոդական ցուցումներ	30.12.2018	1 962 300
ԸՆԴԱՄԵՆԸ						226 949 800

11




ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
 «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ս. Պապյան
 (ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը	Անվանումը Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության ծառայություններ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի	1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի
1016	ԱԾ 06 Նկարագրություն Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության ծառայությունների իրականացում								
	Զափոռոշիչներ								
Քանակական	Ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն, առաջացած թափոնների հաշվառում և դասակարգում, դրանց հիման վրա հաշվետվությունների կազմում: Հաշվետվությունների ընդհանուր թիվը			1050	1050				
	Թափոնների գոյացման, վերանշանման ու օգտահանման օբյեկտների թիվը	4	9	14	20				
	Թափոնների հեռացման վայրերի թիվը	2	5	8	11				
	Միջազգային լավագույն փորձի և սեփական վերլուծությունների արդյունքում մշակված տեխնոլոգիաների թիվը	8	18	29	42				
	Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների մնացորդային քանակների որոշում, հետազոտությունների թիվը	75	165	270	390				
	Տեղեկատվական աղբյուրների թիվը	2	5	7	10				
	Մշակվող փաստաթղթի քանակը				1				
Որակական	Թափոնների պետական կարգադրի ստեղծման և վարման աշխատանքներին աջակցություն. Բազելյան և Ստոկհոլմյան Կոնվենցիաներով ստանձնած պարտավորություններին և ՀՀ գործող նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, %				100				
	Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) ԿՕԱ-ների մնացորդային քանակների որոշում, համաձայն Ստոկհոլմի Կոնվենցիայի, %				100				

Ժամկետայնություն	Աշխատանքների կատարման ժամկետը				Ընթացիկ տարվա ավարտը				
Քանակական	1. Ջրային օբյեկտների մոնիթորինգ, ՀՀ 6 ջրավազանային տարածքի 14 գետավազանի 55 ջրային օբյեկտների 131 դիտակետերում ջրերի որակը բնութագրող 40-60 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ (ցուցանիշ)	7040	19200	32000	40280				
	2. Մթնոլորտային օդի մոնիթորինգ՝ ՀՀ 6 քաղաքներում 16 դիտակայանում և 210 դիտակետում օդի աղտոտվածությունը բնութագրող 2-6 աղտոտիչների վերաբերյալ տվյալներ (ցուցանիշ)	112663	255326	357989	490652				
	3. Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացում (ցուցանիշ)՝ այդ թվում	320	1080	1840	2376				
	3.1 Արաքս գետի հատակային նշվածքների մոնիթորինգի իրականացում (ցուցանիշ)		120	240	360				
	3.2 Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգ (ցուցանիշ)	320	960	1600	2016				
	4. Ծաղկածորում շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացում (ցուցանիշ)	1176	2472	3768	4868				
	4.1 Ծաղկածոր քաղաքում մթնոլորտային օդի և տեղումների որակի մոնիթորինգ (ցուցանիշ)	936	1722	2508	3168				
	4.2 Ծաղկածոր քաղաքում հողային ծածկույթի աղտոտվածության մոնիթորինգ (ցուցանիշ)		270	540	740				
	4.3 Տանձաղբյուր գետի ջրի որակի մոնիթորինգ (ցուցանիշ)	240							
	5. Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա անդրաօմնալայնի աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ (EMEP) ծրագրի շրջանակներում Հայաստանում օդի անդրաօմնալայնի աղտոտման մոնիթորինգի իրականացում (ցուցանիշ)	956	6614	12200	17220				
Որակական	Ցուցանիշների համապատասխանության տեսակարար կշիռը (արդյունավետությունը) ծրագրով հաստատված մոնիթորինգային ցուցանիշներին, %	100	100	100	100				
Ժամկետայնություն	Շրջակա միջավայրի աղտոտվածության վիճակի արդյունքների ամփոփում՝ այդ թվում								
	1. ամսական տեղեկագիր (հատ)	3	6	9	12				
	2. տարեկան տեղեկագիր (հատ)				1				
	3. մակերևութային ջրերի որակի տվյալների տարեկան ամփոփագիր (հատ)				1				
	4. Օդային ավազանի աղտոտվածության տվյալների տարեկան ամփոփագիր (հատ)				1				
	5. Մթնոլորտային օդի աղտոտվածության բաշխման շաբաթական, ամսական և տարեկան քարտեզներ (հատ)	352	704	1056	1408				
Քանակական	Հ բնապահպանության նախարարության սպասարկվող պաշտոնական կայքերի թիվը (հատ)	1	1	1	1				
	Սպասարկվող տվյալների շտեմարանների թիվը (հատ)	4	4	4	4				
	Սպասարկվող Երևանյան Օրիոս կենտրոնի և մարզային Օրիոս կենտրոնների (որոնց տրամադրվում է տեղեկատվություն (թիվ) հատ)	15	15	15	15				
	Սպասարկվող համակարգիչների թիվը (հատ)	50	100	150	206				
	Սպասարկվող տեղային ցանցերի թիվը (հատ)	3	3	3	3				
Որակական	ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքերի անխափան աշխատանքի ապահովում (տոկոս)	95	95	95	95				



	Շտեմարաններ մուտքագրվող վերլուծական մուտքերի և փաստացի սովյալների հավաստիության ապահովում (տոկոս)	95	95	95	95				
	Սակասարվող համակարգիչային տեխնիկայի, տեղային ցանցերի անխափան աշխատանքի ապահովում (տոկոս)	95	95	95	95				
Ժամկետայնության	Բնագիտական ոլորտի վերլուծական տեղեկատվական, ինտերնետային կայքի սպասարկման և զարգացման, համակարգչային տեխնիկայի սպասարկման աշխատանքների իրականացման օրերի թիվը տարվա ընթացքում (օր)	60	123	187	251				
Քանակական	1. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ) այդ թվում՝ բնաղբյուրների թիվը (հատ)	128	128	128	128				
	2. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ) այդ թվում՝ բնաղբյուրների թիվը (հատ)	65	65	65	65				
	3. Ընդամենը տեխնիկական երթուղիների երկարությունը (կմ)	24	24	24	24				
	4. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	39	39	39	39				
	5. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	3	3	3	3				
	6. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	75	175	285	384				
	7. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	52	52	52	52				
	8. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	936	1872	2808	3744				
	9. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	88	88	88	88				
	10. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	1584	3168	4752	6336				
	11. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	2304	4608	6912	9216				
Որակական	1. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)	2484	4968	7452	9936				
	2. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	3. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	4. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	5. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	6. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	7. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	8. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	9. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	10. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
	11. Քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոտեկրաբանական մշտադիտարկումների դիտակետերի թիվը (հատ)		50	50	100				
Որակական	Ցուցանիշների համապատասխանության տեսակարար կշիռը (արդյունավետությունը) ծրագրով հաստատված մոնիտորինգային ցուցանիշներին, %	100	100	100	100				
Ժամկետայնության	Ջրի մակարդակի (ճնշման), ծախսի, ջերմաստիճանի չափումների ամսական պարբերականությունը (անգամ)	18	36	54	72				
	Ջրակետի շուրջ ուղղով անցման ամսական պարբերականությունը (անգամ)	18	36	54	72				
	Ջրի նմուշառումների տարեկան պարբերականությունը (անգամ)		1		2				
Իրականացվող միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	40851.0	93049.5	154325.9	226949.8
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը									
1016 Շրջակա միջավայրի պահպանության, մոնիտորինգի և տեղեկատվական վերլուծական միջոցառումներ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը									
Շրջակա միջավայրի վրա ազդեցության կրճատում/մեղմում									
Միջոցառումն իրականացնողի անվանումը									
«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ									

